Ս. ՔՈԼԱՆՋՅԱՆ

ՏՐԱՆՍԻԼՎԱՆԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ*

Չնայած այն բանին, որ ԺԹ դարի վերջում սկսել էր պակասել հայախոս հայերի թիվը և Տրանսիլվանիայի երբեմնի շենշող հայ գաղութը իր օրհասն էր ապրում, այնուամենայնիվ, ի պատիվ տրանսիլվանահայության, անգամ այդ շրջանում նա տվեց ականավոր այնպիսի դեմքեր, որոնք առաջնորդվելով իրենց նախնիների շնչով, փորձեցին դարձյալ թումբ կանգնեցնել հայ գաղութին սպառնացող համայնակուլ ալիքների դեմ։ Եվ ահա այս ժամանակաշրջանում ավանդապահ հայերի ղեկավարությունն էին ստանձնել Եղիսաբեթուպոլսի հայոց ժողովրդապետ, Վիեննայի Մխիթարյան Միաբանության ապագա աբբահայր և Տրանսիլվանիայի հայաքաղաքների պատմության բազմահմուտ հեղինակ Հ. Գ. Գովրիկյանը (1841—1931 թթ.), «Armenia» հունգարերեն հայագիտական ամսագրի հրատարակիչ-խմբագիր և Գեղայի պատմահայր Խ. Սոնկոտյանը (1843—1907 թթ.), բանասեր և հրապարակախոս Հուլիոս Միրզայանը (1862—1943 թթ.) և ուրիշներ։ Վերջիններս իրենց գործունեությամբ և հրատարակած հայերեն և մասնավորապես հունգարերեն արժեքավոր հատորներով և գրքույկներով, ԺԹ դարի վերջում և Ի դարի սկզբում բացահայտեցին Տրանսիլվանիայի հայությանը սպառնացող ուծացման վտանգը և իբրև դարման, դարձյալ օրակարգի հարց դարձրին հայկական ազգային եպիսկոպոսության վերականգնման խնդիրը։

Գովրիկյանը, ամենայն հավանականությամբ, ԺԹ դարի վերջում ականավոր մի անձնավորության հետ ներկայանալով երկրի համակրթության նախարարին, դարձյալ փորձել էր պաշտպան կանգնել հայ գաղութի իրավունքներին։ Երբ նրանք մատնանշել են, որ Բոսնիայում նոր եպիսկոպոսություններ են հաստատվել և հրեաներն իսկ ունեն իրենց գլխավոր բաբին և թե միայն հայերն են, որ զրկված են այդ իրավունքներից, բարձր պաշտոնյան, որ բացասաբար է տրամադրված եղել հայերի հիշյալ հարցի նկատմամբ, զարմանալով պատասխանել է հետևյալը. «Ունիք եկեղեցական առաջնորդ։ Հո՞ն է Դրանսիլվանիո եպիսկոպոսը»[217]։

Սակայն հայերը այս անգամ էլ չհուսահատվեցին։ Եվ ահա 1900 թվականին, Revue d' Orient" »-ի մեջ լույս տեսած մի հայտարարությունից հայտնի էր դառնում, որ մայիսին հունգարահայերը մեծաթիվ մի պատգամավորություն են ուղարկելու Հռոմ, պապից հայածես եպիսկոպոսության վերահաստատումը խնդրելու համար։ «Հանդէս ամսօրեայ»-ն, գրում էր իր կողմից, որ «Եթե Ս. Գահն Հունգարահայոց երկու դարե ի վեր տածած այս սրտի փափագն կատարելու տրամադիր ըլլա, որուն տարակույս չունինք, հայերը Հունգարիո կառավարության քով հարկավոր եղած քայլերը պիտի առնուն։ Հաջողությո՞ւն»[218]։ Այս սկզբից հետո, որի արդյունքների մասին մեզ ոչինչ հայտնի չէ, 1901 թվականին լույս է տեսնում Հ. Միրզայանի Veridicus (Ճշմարտախոս) ծածկանունով «Հայ ծեսին հունգարական առաքելությունը» հունգարերեն գրքույկը, որը շուտով արտատպվեց նաև «Հունգարիա» թերթում։ Հիշյալ գործի նպատակն էր երկրի նորաբաց ավադաժողովի պատգամավորների ուշադրությանը հանձնել 200 տարիներ շարունակ ձգձգվող և հայերի գոյության համար այնքան կենսական նշանակություն ունեցող այս հարցը։ Հեղինակը, հիմնականում նշելով հայ եպիսկոպոսության

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № ԺԲ-ից, 1965 թվականի № Ա-ից և 1966 թվականի № Բ-ից, Գ-ից, Դ-ից, Ե-ից և Զ-ից։

217 Հ. Գ. Գովրիկյան, «Հայք եպիսկոպոսիս...», Գ, էջ 422—423։

218 «Հանդէս ամսօրեայ», 1900 թ., էջ 188։

վերականգնման կարևորությունը աղդապահպանման գործում, հանդում էր այն եղրակացության, որ այն օդի և ջրի նման անհրաժեշտ է հայերի գոյության համար։ Սքանչելի են հատկապես այն տողերը, որոնք նվիրված են հայերի երկդարյա մաքառումների պատմությանը։ «Հարյուրութսուն ու հինգ տարիե ի վեր կլսվի այս տենչանքը։ Ուստի, չէ թե՛ սերնդի մը գաղափարը՝ ցանկությունն է հայ եպիսկոպոսության վերականգնումը, հապա սերունդներու—որ շարունակյալ մերժմանց բազմապատիկ ընդդիմության հակառակ ալ, չմարեցավ, մեկ՝ կամ մեկալ սերնդյան հոգվույն մեջ—հապա նորոգեցավ, դալարացավ։ Մերժմանեն՝ ընդդիմութենեն ու հակառակություններեն՝ իբրև թե նոր սնունդ առավ... Ասկե ան կհետևի, թե դեռք է, որ այս փափագն, այս տենչանքն արդարության, ճշմարտության վրա հիմնված ըլլա»։

Հեղինակը զգացնել է տալիս նաև այն, որ իրենց իրավունքը արդար է. «Որովհետև իրավանց վրա հիմնված տերության մը մեջ, արդարությունը՝ կենթադրե իրավունք։ Հայերը չեն խնդրեր նոր արտոնություն իրենց համար... հապա միայն ետ կխնդրեն ան բանը, զոր արդեն ունեին»։ Վերջում, նկատի ունենալով 1868 թվականի օրենքով հայ կաթոլիկ եկեղեցին իբրև ինքնուրույն եկեղեցի ճանաչվելը, գրում էր. «Ահա՝ երկայն ժամանակե ի վեր հերկունս եղած խնդիրը—ահա՝ օրենքով ապահովղված հասարակաց իրավունքը—ահա՝ հավասարության հիման վրա դրված փափագը՝ իր նպաստավոր լուծումը կստանա... տերության ավագաժողովեն»[219]։

Ամենայն Հայոց Կաթողիկոսության պաշտոնաթերթ «Արարատ» ամսագիրը 1902 թվականին անդրադառնալով այս հարցին, ճիշտ կերպով պաշտպանում էր Տրանսիլվանիայի հայոց արդար իրավունքը, գրելով. «Մեր բոլոր համակրանքը Մխիթարյանների պաշտպանած արդար դատի կողմն է» և ապա ամբողջությամբ արտատպում «Հանդէս ամսօրեայ»-ից «Դրանսիլվանիո ազգայնոց փափագը» գրությունը[220], որից մեջբերումներ արեցինք վերևում։

Մի քանի տարվա տիրող լռությունից հետո, հայ ազգային եպիսկոպոսության վերականգնման հարցը կրկին խնդրո առարկա է դառնում 1906 թվականին, երբ Հունգարիայի ազատասեր Ֆրանց Բ Ռակոցի իշխանի աճյունը Կ. Պոլսից հայրենիք է տեղափոխվում։ Այդ գործում իր օժանդակությունն է ցույց տալիս նաև Կ. Պոլսի հայ կաթոլիկ Պատրիարքարանը։ Եվ այս առիթ է լինում կրկին զբաղվելու Տրանսիլվանիայի հայ ազգային եպիսկոպոսության վերականգնման հարցով։ Սույն գործի համար Պատրիարքարանից լիազորված Հ. Հովհաննես ծայրագույն վարդապետ Թումայանը հատուկ հանձնարարագրերով նույնիսկ գնում և ներկայանում է Տրանսիլվանիայի Գուստավ լատին եպիսկոպոսին և այլ կարևոր անձնավորությունների։ Նա մեծ ընդունելության արժանացավ հատկապես Եղիսաբեթուպոլսում և հայերը, ոգևորված, Թումայանին առաջադրեցին ապագա հայ եպիսկոպոսության թեկնածու։ Հայերի ոգևորությունը և հույսերը շատ ավելի մեծացան հատկապես այն ժամանակ, երբ հայ եպիսկոպոսության վերականգնման գործի մեծագույն ոգևորողներից մեկը՝ Գովրիկյանը, ընտրվեց Վիեննայի Մխիթարյան միաբանության ընդհանուր արբահայր[221]։

Հ. Միրզայանը, թարգմանը հանդիսանալով ավանդապահ հայերի պահանջների, նույն 1906 թվականին հունգարերեն հրատարակեց մի գրքույկ ևս, «Գեոլայի և բալկանների հայ կաթոլիկ եպիսկոպոսական Աթոռի նշանակությունը» խորագրով։ Գրքույկում հեղինակը նախ և առաջ ընդհանուր մի ակնարկ է գցում Տրանսիլվանիայի հայոց եպիսկոպոսական Աթոռի անցյալի վրա և ապա անում մի շարք գործնական առաջարկություններ։ Խոսում է նաև հայկական արարողությունների կրած լատինական ազդեցության և հայերեն լեզվի թուլացման մասին և կրկին եզրակացնում, որ տիրող վատթար վիճակից հայերին միայն հայ ազգային եպիսկոպոսության վերահաստատումը կարող է փրկել։ Միրզայանը ի վերջո հայկական եպիսկոպոսության հարցի լուծումն է համարում Վիեննայի Մխիթարյանների տեղափոխումը Գեոլա. հայաբաղաքում[222]։

Հ. Միրզայանը, նույն հարցին վերաբերյալ հրատարակեց նաև «Հայ եպիսկոպոսությունը», Կլուժ, 1896 թ., «Հուշագիր երկրի հայերի եպիսկոպոսության վերահաստատման օգտին», Կլուժ, 1911 թ. գործերը։ Այս բոլորը, ինչպես նաև հունգարական մամուլում ժամանակ առ ժամանակ լույս տեսնող հայանպաստ ակնարկները նոր եռանդ էին տալիս Տրանսիլվանիայի հայերին, որոնք քաջ դիտակցելով իրենց օրհասը, էլ ավելի ամուր կառչում էին գործի։

---

[219] Նույն տեղում, 1901 թ., էջ 358—359 և Հ. Գ. Խովրիկյան. «Հայր յիդիսարեթուպոլիս», Գ, էջ 423—427։

[220] «Արարատ», Վաղարշապատ, 1902 թ., էջ 43—47։

[221] «Հանդէս ամսօրեայ», 1910 թ., էջ 245—247։

[222] Օգտվել ենք Հիշյալ գործի թարգմանությունից (տե՛ս Մաշտոցյան Մատենադարանի Ա. Այպոյանճյանի գիվանից, Համակների բաժին, № 3038)։

1906 թվականի սեպտեմբերին, Տրանսիլվանիայի հայածես կաթոլիկ հոգևորականության ժողովը մի անգամ ևս որոշում է, որ միայն և միայն հայ եպիսկոպոսության վեբականությունը կլիրկի հայ դաղութին իրեն սպառնացող աղետից։ Նույն ժամանակ որոշվում է նաև Վիեննայում գործող տրանսիլվանահայ Մխիթարյանների՝ Հ. Գ. Գովրիկյանի և Հ. Դ. Տուհայանի միջոցով մի դիմում հանձնել Հունդարիայի կրոնական գործերի նախարար Ապպոնիին։ Սակայն այս անգամ էլ քաղաքական դեպքերի և խորհրդարանի լուծման հետևանքով, խանգարվում և հետաձգվում է սույն խնդիրը։

1909 թվականի սեպտեմբերի 19-ին, Գեոլա հայաքաղաքում «Հայկական թանգարան»-ի բացման առիթով գումարված Տրանսիլվանիայի հայ երևելի մարդկանց ընդհանուր ժողովում, դարձյալ որոշվեց մի դիմում ներկայացնել երկրի կրոնական գործերի նախարարությանը։ Հ. Ա. Ջնտոյանը, սքանչանալով Տրանսիլվանիայի ավանդապահ հայերի բացառիկ կամքի և հայրենասիրության վրա, Գեոլայից 1910 թվականին դրում էր. «Հայուն կյանքը որչափ տոկուն ու կենսական նղած է, որ դարավոր շրջաններ ընելով հանդերձ, փոխանակ մինչև ցայժմ բնական ճամբով օտարութենե պարտած, պատմական ճամբան բռնած ըլլալու, ահա կարծես ոգի ի բռին կմաքառի մահվան դեմ և դեռ կենսական կյանք մը ձեռք ձդելու կաշխատի»։ Շարունակության մեջ հոդվածագիրը, խոսելով հայերի տեղից տեղ ցրվելու և ուծանալու մասին, գրում էր, որ Տրանսիլվանիայի հայոց նույնիսկ կենտրոնը համարված Գեոլա հայաքաղաքը ևս, որ անցյալում 7 000 հայ բնակիչ է ունեցել, այժմ հաղիվ 1 300 հոգի է հաշվում։ Այդ պատճառով էլ «Հայ եպիսկոպոսի նկատմամբ հունգարահայը կկարծե, թե պիտի ըլլա իրեն համար Մովսես մը, որ հասցնելով նոր կղերականներ, ցիր ու ցան հոտին գլուխներ, արծարծելով հայ ծեսը, հայ ոգին ու հայ լեզուն, տա հայության այն սպեղանին, որով հուսալի է երկարել հայուն կյանքը»[223]։

Եվ ահա տիրող քաղաքական անբարենպաստ պայմանների հետևանքով մեկ տարի ձգձգվելուց հետո, 1910 թվականի հոկտեմբերի 28-ին Տրանսիլվանիայի հայոց պատգամավորությունը հասնելով Բուդապեշտ, ներկայացավ Հունգարիայի կրոնական գործերի և համակրթության նախարար կոմս Հովհաննես Ջիչիին։ Պատգամավորությունը, որ 12 կառքերով հասավ նախարարություն, բաղկացած էր Տրանսիլվանիայի և Հունկարիայի հայ համայնքները ներկայացնող 63 հայ անձնավորություններից։ Հայ պատգամավորությունը ղեկավարում էր Վիեննայի Մխիթարյան Միաբանության արբահայր գերապայծառ Գ. Գովրիկյանը, իսկ անդամներից հիշատակենք դոկտ. Լաղիղլավ Կոբշայանին՝ կրոնական գործերի և համակրթության նախարարության առաջին խորհրդականը (Բուդապեշտ), Էլեմեր Դանիելյանին՝ նախարարության քարտուղար Հ. Դավիթ Տուհայանին՝ առաքելական քարոզիչ Դանուբյան իշխանություններում (Նյասոց), Հ. Ղուկաս Պարանյանին՝ ավագերեց և ժողովրդապետ (Գեոլա), Հ. Սիմոն Ֆարառնյանին՝ ավագերեց և ժողովրդապետ (Սեպվիզ), Ղուկաս Դոտորֆյանին՝ քաղաքապետ (Գեոլա), դոկտ. Հովսեփ Պոպյանին՝ փաստաբան (Կլուժ), Հուլիոս Միրգայանին՝ հայագետ բանասեր (Կլուժ), դոկտ. Զաքարիա Տոնոկանյանին՝ բժիշկ և համալսարանի դասախոս (Բուդապեշտ), Արթուր Վակարյանին՝ լրագրալետ (Ջուրջով) և ուրիշներին։ Հայկական պատգամավորությունը, ներկայանալով նախարարին, Գովրիկյանը իբրև ղեկավար նախ պատմելուց հետո հայ տղգային եպիսկոպոսության անցյալի մասին, ապա հետևյալ սրտառուչ խոսքերը ասաց. «Երկու հարյուր տարիի չափ աշխատեցան և խնդրեցին հայ ժողովրդապետությունները՝ թե՛ Ս. Աթոռն և թե՛ կառավարութենեն, որ իրենց հայածես եպիսկոպոս մը տրվի։ Բայց իրենց աղաչանքը մինչև հիմակ լսելի չեղավ։

Նորեն կխնդրենք։ Ու կխնդրենք անոնց անվամբն, որոնք ամեն ատեն հայրենյաց խորաններուն վրա ղոհ եղան, իրենց ստացվածքովն ու իրենց արյամբը։

... Կը խնդրենք մեր հաստուկ ծեսն ունեցող եկեղեցական վարչություն մը՝ քահանա ձեռնադրելու իրավամբ և տերության համապատասխանող հասույթով»։ Գովրիկյանը ապա նշեց, որ սույն պահանջը երբեք քաղաքական կամ ազգային որևիցե անջատում չի հետապընդում, այլ հանդիսանում է լոկ եկեղեցական հարց և շարունակելով իր խոսքը ասաց. «Միսին անվթար պահպանությունը՝ հայ ցեղին մնացականությունը կապահովցնե։ Հունգարական գաղափարին ավելի մեծ ծառայություն կրնան մատուցանել հայերն, իբրև հայ կաթոլիկե հունդարացիներ, քան որ անհետ ըլլալով՝ ձուլվին ազգին մարմնույն մեջ։ Հայկական եկեղեցին՝ իբրև լուսատու աշտարակ մը, ամեն ատեն լույս պիտի սփռե այն ուղղուլն վրա, որն որ ոձեան ու ոհայրենասիրությունն՝ իրարու հետ կընդգրկե...։

[223] Հ. Ա. Ջնտոյան, «Հունդարիո հայոց եպիսկոպոսության խնդիրը», տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1910 թ., էջ 246, 248։

«Հայ եկեղեցվույն սեփական գլուխ ունենալը՝ չէ թե միայն հարկավոր, հապա նաև արդար ու իրավացի է։ Իրավացի՝ անոր համար, վանդի նախնյաց ունեցած դիրքությունն և հունգարական տերության ու ազգին հետ ուրախության և վշաց մեջ 250 տարիներ ի վեր՝ մեկ սիրտ ու մեկ հոգի եղած, հայ ժողովուրդը կ իափադի և հունգարական ազգին համար երբեք չդադրելի շնորհապարտության ապահովությամբը կենդրն Ս. Գահուն և տերության ձեռք իր նախնի եկեղեցվույն վերանորոգությունն ու ասով՝ իր ազատությունը»։

«Գովրիկյանը վերջում պատգամավորության անունից նախարարին հանձնեց հուշագիրը, որին ի պատասխան նախարարը ասաց. «Գիտեմ, որ այս բանս Ձեր մեկ հին փափագն է, զոր հիմակ դարձյալ կվերանորոգեք։ Սակայն ես հիմակ այն վիճակի մեջը չեմ, որ այսօր որոշ ու ապահով հայտարարություն մը կարենամ ընել և կամ որոշ ուղղություն մը ցուցնել այս բանիս նկատմամբ»։ Սակայն խոստացավ հետագայում աշխատել այս ուղղությամբ, և բառացի ասաց նաև հետևյալը. «Եվ խնդիրն՝ ինչ որ ալ պատահի, կրնաք համոզված ըլլալ, որ հայածես ուղղափառաց և անոնց օգտին ի նպաստ՝ միշտ ամենամեծ սիրով և լավազգացությամբ պիտի ընդդրկեմ»[224]։

Ինչպես հունգարական, այնպես էլ սիյուքահայ բովանդակ մամուլը երկարորեն գրազվեց այս հարցով։ Նույնպես Ամենայն Հայոց Կաթողիկոսության պաշտոնաթերթ «Արարատ» ամսագիրը 1910 և 1911 թվականների մի շարք համարներում ջերմորեն արձագանքեց Տրանսիլվանիայի հայերի դերմարդկային ճիգերին[225]։

Սակայն, ինչպես միշտ, այս անգամ էլ անցյան տարիները և հայոց խնդիրը մնաց անպատասխան։

Եվ այսպես Տրանսիլվանիայի հայախոս, լամ ինչպես նրանք էին իրենց սիրում ասել, հայաշուրթ կենտրոնները մեծ մասամբ դաստուրկացյան հայերից և հայորդիների ձուլումը տեղացի տարրի մեջ ավելի քան արագացավ։

1921 թվականին Տրիանոնի պայմանագրով Տրանսիլվանիան միացվեց Ռումինիային և ահա կրկին սկսեց արծարծվել հայոց եպիսկոպոսության հարցը։ Արդեն իսկ 1928 թվականի ապրիլի 22-ին, Ռումինիայի դավանության օրենքի 21-րդ հոդվածի համաձայն, հիշատակված եկեղեցիների շարքում կար նաև հայ կաթոլիկ ծեսը։ Շատ շուտով, 1930 թ. հունիսի 5-ին, Ռումինիայի պետության և Վատիկանի միջև կնքված կոնկորդատով, նախատեսվում էր, որ հայ ծեսին պատկանող պետության բոլոր կաթոլիկները պետք է որ ունենան իրենց հոգևոր պետը։ Առաջնորդի նստատեղին էր լինելու Գեոլան, իսկ այն անմիջականորեն պետք է ենթարկվեր Վատիկանին։ Այսպիսով, հայերի երկդարյա պայքարը իր լուծումն էր գտնում Ռումինական կառավարության օրոք։

1930 թվականի հոկտեմբերի 17-ին, Տրանսիլվանիայի և բովանդակ Ռումինիայի հայ կաթոլիկ նորաստեղծ թեմի հոգևոր առաջին առաջնորդ ընտրվեց Վիեննայի Մխիթարյաններից Հ. Սահակ Կոզյանը։

1939 թվականի օգոստոսին, Ռումինահայ կաթոլիկների թեմի առաջնորդ ընտրվեց Տրանսիլվանիայի հայության ընտիր մեկ դավակը՝ Հ. Հովհաննես-Զալան Լենկելյանը (1908—1964 թթ.), որն իր նստատեղին հաստատեց պատմական Գեոլա հայաքաղաքում։ Սույն առքերը ստորագրող բազմիցս ականատես է եղել Հ. Լենկելյանի ազգասիրական ժրաջան աշխատանքներին։ Նա մի կողմից մեսրոպատառ մեր լեզուն էր աշխատում սովորեցնել հունգարացած հայ մանուկներին, իսկ մյուս կողմից Գեոլայի հոյակապ մայր տաճարում վաղեմի հայ գաղութի վերջին բեկորներին հաղորդակից էր դարձնում հայոց պատարագին։ Դարձյալ նա էր, որ երիտասարդական մեծ եռանդով փրկել էր հայերեն ձեռագրերի հարուստ ժողովածուն պատերազմի արհավիրքներից և դարձյալ ինքն էր, որ Մայր Տաճարում պատահած հրդեհի ժամանակ անձնազոհ կերպով նույն թանկագին գրչագրերը կարողացել էր ազատել ստույգ ոչնչացումից։ Հ. Լենկելյանի վաղաժամ մահից հետո, ներկայումս, երբ բացի մի հոգևորականից, ոչ մի հայ հոգևոր դաստոնյա չունի տեղի հայությունը, դարձյալ լատին եպիսկոպոսն է, որ իր վերին իրավասությունն է տարածել նրանց վրա։ Վերջին հայ խլյակները այսօր այլևս ի վիճակի չեն ձայն բարձրացնելու հայ եպիսկոպոսության և թեմի վերականգնման մասին այնպես, ինչպես իրենց անմահ նախնիներն էին արել սերունդներ շարունակ։ Պետք է կարծել, որ հայ կաթոլիկ Պատրիարքությունը իր հնարավորության սահմաններում ցմտածի Տրանսիլվանիայի թեև հունգարացած, սակայն իրենց հայ հոգին դեռ ամուր պահած վաղեմի հայ գաղութի վերջին բեկորների ճակատագրի մասին, քանի դեռ ուշ չէ։

[224] «Հանդէս ամսօրեայ», 1910 թ., էջ 355—357։

[225] «Արարատ», 1910 թ., էջ 932—933, 1055, 1911 թ., էջ 108։

***

Ավարտելով Տրանսիլվանիայի հայերի աղգային ինքնուրույնության համար մղած երկու հարյուր հիսունամյա պայքարի պատմությանը նվիրված ներկա ուսումնասիրությունը, փաստերի քննությունը հանգեցնում է մեզ հետևյալ գլխավոր հետևությունների.

1. Լեհաստանի հայերի բռնի կաթոլիկացումից հետո, Լվովի նորաստեղծ հայ-կաթոլիկ թեմը գլխավոր հենակետ հանդիսացավ Տրանսիլվանիայում ապաստանած, ինչպես նաև դեռևս Մոլդովայում անհովիվ մնացած հայերին պապականության գիրկը մղելու գործում։

2. Լեհահայ կաթոլիկ թեմի առաջնորդ տիրահռչակ Նիկոլ Թորոսովիչի և նրա հաջորդների կողմից նաև Մոլդովայի հայերի հոգևոր առաջնորդ անվանվելը, ինքնահնար և խարդախ մի քայլ էր Մոլդովայի հայերին ևս կաթոլիկացնելու համար։

3. Օքսենտ Վրդարյան վարդապետը, որն իր ուսումը ստացել էր Հռոմի Ուրբանյան վարժարանում, Լվովի հայ կաթոլիկ թեմի առաջնորդ Վարդան եպիսկ. Հունանյանի, ինչպես նաև Պրոպագանդայի կողմից նկատվեց ամենահարմար թեկնածուն Տրանսիլվանիայից Մոլդովա գաղթած հայերին ժամ առաջ «դարձի» բերելու համար։

4. Քննարկվող փաստերը անվիճելիորեն հերքում են մինչև այժմ պատմագրության կողմից ընդունված այն թյուր կարծիքը, ըստ որի իբր Տրանսիլվանիայում ապաստանած հայերը ամենայն հեշտությամբ ընդունել են կաթոլիկությունը։ Պարզվում է, որ իրականում բաղմաթիվ սերունդներ համառ և երկարատև պայքար են մղել լատինական ամեն մի նորամուծության դեմ և ամենայն վճռականությամբ պաշտպան կանգնել հայրենի ավանդություններին և սովորույթներին։

5. Ապացուցվում է, որ Մոլդովայի հայոց հոգևոր առաջնորդ Մինաս Ջիլիֆտար օղլու եպիսկոպոսը, ոչ թե 1669—1672 թթ. անցել և գտնվել է Տրանսիլվանիայի Բիստրիցա քաղաքում, ինչպես կարծել են ոմանք, այլ նա հասել է Տրանսիլվանիա միայն 1676 թ. և հաստատվել Ջուրջով քաղաքում։ Նույն Մինաս եպիսկոպոսը, որը 10 տարի շարունակ բուռն կերպով մերժել էր ընդունել կաթոլիկությունը, միայն իր կյանքի վերջին ամիսներին, այսինքն 1686 թ. ինչպես մեծ ցնծությամբ արձանագրել են կաթոլիկական աղբյուրները (Վ. Հունանյան, Ստ. Ռոշքա և այլն), հարեց Լվովում հռոմեական դավանությանը։ Բացահայտվում է, սակայն, որ Մինասը իրականում Լվով է տարվել կաթոլիկական քարոզչության այնպիսի ղեկավարների կողմից, ինչպիսիք են Վ. Հունանյանն ու Օք. Վրդարյանը և ապահովաբար նրան կաթոլիկացրել են բռնի կերպով, իսկ վերադառնալուց քիչ անց, նա արդեն մահացել է։

6. Հերքվում է նաև բաղմաթիվ պատմաբանների կողմից ընդունված այն կարծիքը, ըստ որի հիշյալ Մինաս եպիսկոպոսը (մահացած 1686 թ.) և 1649 թ. ձեռագիր մի Ավետարանում հիշատակված Մինաս վարդապետը (որը դարձյալ եղել է Մոլդովայի հայոց հոգևոր առաջնորդը), իբր միևնույն անձնավորությունն է եղել։ Աներկբայորեն ապացուցվում է, որ Տրանսիլվանիա դտդիող Մինաս եպիսկոպոսը Մոլդովայի հայոց առաջնորդ դարձած կարող էր լինել, ոչ շուտ, քան 1669 թ. վերջը, քանի որ նույն թվականին իբրև Մոլդովայի հայոց առաջնորդ հիշվում է Սահակ եպիսկոպոսը։ Այնինչ 1649 թ. հիշատակված Մինասը 1656 թ. գոհ է գնացել Սուչավայի հայոց վանքի վրա կատարված մի ասպատակության ժամանակ։

7. Օքսենտ Վրդարյանը սկսած 1686 թ. մինչև իր մահը (1715 թ.), հակառակ իր կողմից ղործադրած բոլոր հորդորներին և անդամ բռնի միջոցառումներին, չկարողացավ իր ավարտին հասցնել Տրանսիլվանիայի բոլոր հայերին կաթոլիկացնելու իր «առաքելությունը»։

8. Օքսենտ Վրդարյանը 1690 թ. սկսում է Մոլդովայում դեռևս անղեկ մնացած հայերին ևս պապականության գիրկը մղելու դործ։ Սակայն ինչպես անցյալում, այս և հետագայի նմանօրինակ բոլոր փորձերը մատնվում են անհաջողության։

9. Տրանսիլվանիայում կաթոլիկության հարած հայերը շատ շուտով համոզվեցին իրենց նախապես տրված խոստումների սնանկ և կեղծ լինելու մասին, քանի որ նրանց տնտեսական դրությունը կաթոլիկության ընդունումից հետո շատ ավելի վատթարացավ։ Հայերի մի մասը ստիպվեց դուրս գալ երկրից, իսկ որոշ մասն էլ անսալով երկրի իշխան Միքայել Ա. Ապաֆիի հորդորներին անցավ նրա Բաշդբալով (ապա Եղիսաբեթուպոլիս) կալվածը և ընդունելով նրա հովանավորությունը և օգտվելով նրա տված առանձնաշնորհումներից, դարձյալ վերադարձավ հայ եկեղեցու գիրկը։

10. Հայ եկեղեցու գիրկը դարձյալ վերադարձած հայերի ուժեղ գիմադրությունը միայն և միայն ջլատվեց 1731 թ. լատին եպիսկոպոսի հրահանգով և հայ մեծամեծների բռնությամբ, որոնք երկրից աքսորելու սպառնալիքով ջանացին բռնի կաթոլիկացնել բոլորին։ 1731 թ. ցարդ ընդունված է իբրև

Տրանսիլվանիայի հայերի կաթոլիկացումը ավարտելու թվական, այնուամենայնիվ գեռևս մինչև իսկ 1758 թ. կայսերական հրովարտակում հիշատակվում են «ուղղափառ չհաղորդ», այսինքն ոչ կաթոլիկ հայերի մասին, ուստի դժվար չէ հետևցնել, որ անդամ 18-րդ դարի երկրորդ կեսին Տրանսիլվանիայի ոչ բոլոր հայերն են, որ կաթոլիկ էին։

Կաթոլիկությանը հարած հայերի միջև ևս տեղի է ունեցել ուժեղ պայքար։ Նրանցից մեծ մասը ընդունելով հանդերձ Հռոմի պապի ձևական գերիշխանությունը, միաժամանակ ուզի ի բուն մարտնչում էր պահպանել հայրենի ավանդությունները և սովորույթները, իսկ մյուս կողմից հայերի փոքրաթիվ մի մասը ցանկանում էր հայրենի հնավանդ սովորույթներին վերջ տալու միջոցով դուր դալ հայ թեմի ինքնակոչ տերն ու տիրականը դարձած լատին եպիսկոպոսին և նրանից եկամտաբեր պաշտոն ստանալ։

11. Յարդ պատմագրության մեջ տիրել է նաև այն կարծիքը, ըստ որի իբր Տրանսիլվանիայի հայերը իրենց ցանկությամբ թողել են հին տոմարը և ընդունել նորը։ Այնինչ փաստերի քննությունը բոլորովին այլ հետևության է բերում ուսումնասիրողին։ Վրդարյանը հավանական է, որ կաթոլիկության տարածման հետ միասին 1690 թ. Տրանսիլվանիայի հայերի մի մասի մոտ կիրառության մեջ էր դրել նոր տոմարը, սակայն նրա մահով ապահովաբար այն մոռացության տրվեց։ Ավելի ուշ հայտնի լեհահայ մատենագիր Ատ. Ռոշքայի կողմից նոր տոմարը մուծելու նոր փորձը ևս արմատ չի բռնում հայերի մոտ։ Նույնպես այն հնարավոր չեղավ հայերին ընդունել տալ ոչ իսկ 1731 թ., երբ աքսորի սպառնալիքով հայերին բռնի կաթոլիկացնելուց բացի, որոշվել էր ընդունել տալ նաև նոր տոմարը։ Ի վերջո նոր տոմարը պարտադրվեց Եղիսաբեթուպոլսի հայերին 1757 թ. և հանդիպեց ժողովրդական զանգվածների կողմից ուժեղ դիմադրության, քանի որ հին տոմարի պահպանումը ավանդապահ ժողովրդական խավերի համար համարվում էր իբրև իրենց ազգային ինքնուրույնությունը պահպանող կարևոր ազդակներից մեկը։ Նոր տոմարի ընդունումը ի վերջո տեղի ունեցավ, ոչ թե հայերի կամքով, այլ երկարամյա բուռն պայքարից հետո և այն պարտադրվեց դարձյալ վերևից բռնի կերպով։ Անդամ Գնոլա հայաքաղաքում, որը համարվել էր իբրև հայ կաթոլիկության կենտրոն, նոր տոմարը ավանդապահ հայերի կողմից երկար տարիներ մերժվել էր և այն մուտք գործեց հազիվ 1758 թ.։

12. Վրդարյանի մահից հետո Տրանսիլվանիայի լատին եպիսկոպոսը ինքնակոչ կերպով իր իրավասությունը տարածեց նաև երկրի հայ թեմի վրա և ծրագրված կերպով սկսեց վերջ տալ հայերի մինչ այդ վայելած ինքնուրույնությանը և մայրենի լեզվի ու սովորույթների պահպանմանը։ Ահա թե ինչու Տրանսիլվանիայի հայերի կողմից իրենց ինքնուրույնության համար մղած պայքարը ամենից ավելի երկարատև և կազմակերպված բնույթ ընդունեց հատկապես հիշյալ հայկական ինքնուրույն եպիսկոպոսության վերականգնման համար մղած ավելի քան երկդարյա համառ մարտերում։

Տրանսիլվանիայի հայերի բացառիկ այս կենսունակությունն ու իրենց ազգային ինքնուրույնության պահպանման համար մղած համառ ու երկարատև պայքարը արդյունք էր այն բանի, որ նրանք տվյալ ժամանակաշրջանում Լեհաստանի հայերի մեծ մասի նման չէին մոռացել իրենց մայրենի լեզուն և կամ չէին ձուլվել, այլ ընդհակառակն, նրանց նախնիները հայրենի երկրից ուղղակի գաղթելով Մոլդովա և այնտեղ էլ սրբությամբ պահպանելով հնավանդ սովորույթները, Տրանսիլվանական հողում իրենց աչքերը բացող նորանոր սերունդներին կարողացել էին հաղորդակից դարձնել դարերից եկող հայրենի շնչին։ Ազգապահպանման այդ գործին որոշ ժամանակ մեծապես սատարել էին նաև նույն դաղութի ծոցից ծնված հայ առաջավոր մտավորականների այն հույլը, որ հայրենասիրական ոգով լուսավորական գործունեություն էր ծավալել Տրանսիլվանիայի հայաշատ կենտրոններում, իրենց սպառնացող օրհասը գիտակցող հայության մեջ։

Այդ պատճառով էր, որ հայերը առանց վհատվելու կարողացել էին լատինական նորամուծություններին երկարաբեն հակադրել իրենց ազգային ծեսն ու հայրենի նվիրական ավանդույթը։

Այսպիսով լատինականության դեմ հայերի մղած պայքարը, իրականում պայքար էր ազգային ինքնուրույնության պահպանման համար»։

Ահա թե ինչու Տրանսիլվանիայի հայերի կողմից իրենց տեղային ինքնուրույնության և հայրենի ավանդությունների պահպանման համար մղած այդ երկարապատում պայքարի ժամանակաշրջանը, իր բոլոր հերոսական դրվագներով, արժանի տեղ պետք է գրավի հայ գաղութների մաքառման պատմության ոսկեմատյանում։